



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 դեկտեմբերի 2002թ. թիվ 45

ք. Հրազդան

«ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԸ» ՎԵՐԱԿԱԶՄԱԿՈՐՄԱՆ ԶԵՎՈՎ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Ի կատարումն «ՀՀ Կոտայքի մարզային ենթակայության մշակույթի կենտրոն պետական հիմնարկը» պետական ոչ առևտրային կազմակերպության վերակազմակերպելու մասին» ՀՀ կառավարության 2002թ. հոկտեմբերի 10-ի թիվ 1649-Ն որոշման պահանջների.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

1.«ՀՀ Կոտայքի մարզային ենթակայության մշակույթի կենտրոն պետական հիմնարկը» վերակազմակերպել «Կոտայքի մշակույթի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն:

2.«Մարզային մշակույթի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության պետական սեփականություն հանդիսացող գույքը, բացառությամբ շենքի, շինությունների, պատմամշակութային նշանակության և նվազագույն աշխատավարձի 10000-պատիկից ավելի արժողությամբ գույքի, սեփականության իրավունքով հանձնել մարզային մշակույթի կենտրոնին:

3.Հաստատել «Կոտայքի մշակույթի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը և փոխանցման ակտը:

4.Կազմակերպության տնօրեն վերահաստատել Արմեն Սիմոնյանին:

5.Հանձնարարել մշակույթի տան տնօրեն Ա.Սիմոնյանին հիմնարկի տնօրինության շենքը, շինությունները, պատմամշակութային նշանակության և նվազագույն աշխատավարձի 10000-պատիկից ավելի արժողությամբ գույքն անհատույց սեփականության իրավունքով հանձնել վերակազմակերպված «Կոտայքի մարզային մշակույթի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը, ՀՀ պետական գույքի կառավարման նախարարության հետ կնքել պայմանագիր և մինչև ս/թ դեկտեմբերի 10-ը ավարտել վերակազմակերպման հետ կապված բոլոր գրանցումները և փաստաթղթային ձևակերպումները:

6.Ֆինանսատնտեսագիտական վարչությանը /պետ Լ.Նահապետյան/ աջակցել մարզային մշակույթի կենտրոնին սույն որոշման իրականացման գործում և վերահսկել դրա կատարումը:

Կ. ՇԱՀԱՆԴՅԱՆ



